Գևորգ Էմին

Մի պարսկուհու

Պարսկական գողտրի~կ մանրանկար,
Ինչու? այսօր իմ մի’տն ընկար…
…Այդ նկարի մեջ, Գյուլիստանո’ւմ,
Շահն իր հարճի հետ քե~ֆ է անում.
Շահը, վստահ իր փառքին, զենքին,
Չի~ էլ նայում իր հարճի դենքին.
Նա նայում է իր ապարանքին,
Իր գահին, թագին ու բանակին…
Իսկ հարճը, ճերմակ վիզը ծռած,
Նայում է այգու մութ անկյունին,
Որտեղից նրան ջահել ծառան
Նայո~ւմ է սիրով իր արքունի…
Իր սիրով մեղսո~տ,
Գաղտնի~,
Անզ~որ,
Բայց հզոր՝ գահից ու եղեմից,
Որի դեմ բա~ց է գիշեր ու զօր
Գաղտնի դռնա’կը ճոխ հարեմի…
…Պարսկական գողտրի~կ մանրանկար,
Ինչո?ւ դու այսօր իմ մի’տն ընկար…
…Ազա’ր, մի’ նայի այդպես անահ,
Շահը խելո~ք է, կհասկանա’…